



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8**

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԶԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

2020 թվականի սեպտեմբերի 24-ին ժամը 18:30-ին հրավիրված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ավագանու արտահերթ դռնբաց նիստին մասնակցելու համար մինչև ժամը 19:00-ն ավագանու տասնմեկ անդամից ներկայացել էին միայն երեքը՝ Քաջիկ Գասպարյանը, Կարեն Մանասերյանը և Ենոք Սաֆարյանը:

Բացակա էին՝ Արմեն Գաբրիելյանը, Արտակ Գևորգյանը, Վահե Լևոնյանը, Արմեն Մարգարյանը, Գեղամ Մարգարյանը, Մաղաք Մարտիրոսյանը, Էմիլ Սարգսյանը, Գեղամ Վարդանյանը:

**Նիստին մասնակցելու համար համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել էին՝**

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը և առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համայնքի ավագանու օրենքով սահմանված թվի /11/ կեսից ավելիի բացակայության պատճառով նիստն իրավազոր չէ. արձանագրվում է, որ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 8 արտահերթ նիստը համարվում է չկայացած:

Նիստին ներկա ավագանու անդամներ

ՔԱԶԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԵՆՈՔ ՍԱՖԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար՝  
ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Արձանագրությունը կազմեց՝  
ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_